ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

03.07.2015թ.
252-ի 1

ՀՀ մշակույթի նախարար
տիկին Հասմիկ Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի տիկին Պողոսյան,

2015թ.-ի հունիսի 18-ի 250-7 հարցմամբ ԻԱԿ-ը դիմել էր ՀՀ մշակույթի նախարարությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ հոգի է մեկնել (գործուղվել) Ֆրանսիա՝ Կաննի միջազգային մշակութային միջոցառմանը մասնակցելու նպատակով,
2. Խնդրում ենք տրամադրել մեկնած (գործուղված) անձանց անուն-ազգանունները եւ զբաղեցրած պաշտոնները,
3. Որքա՞ն գումար է ծախսվել ճանապարհածախսի եւ որքա՞ն գումար՝ կացարան (ներառյալ՝ օրապահիկ) ապահովելու նպատակով:

Պատասխան գրությամբ նախարարությունը տրամադրել է հարցման 3-րդ հարցի պատասխանը, սակայն միջոցառմանը մասնակցած պաշտոնյաների (հարցման 1-ին եւ 2-րդ հարցերի) վերաբերյալ նախարարությունը որեւէ պատասխան չի տրամադրել:

Հայտնում ենք, որ ԻԱԿ-ի հարցման 1-ին եւ 2-րդ հարցերը վերաբերում են մշակութային միջոցառմանը մեկնած պաշտոնյաներին, ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ 1-ին եւ 2-րդ հարցերով խնդրված տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան